



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՐԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 Հունիս, 2019 թվականի № 30-Լ

«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԸ, ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը, «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի հունիսի 20-ի N 01/3-3/10427-2019 գրությունը և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2018 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 3,328.5 հազ. ՀՀ դրամ:
2. Հաստատել Ընկերության 2018 թվականի գործունեության արդյունքում ստացված 6,657.0 հազ. ՀՀ դրամ գուտ շահույթից 3,328.5 հազ. ՀՀ դրամն ուղղել Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի վճարմանը:
3. Հաշվի առնելով, որ Ընկերությունը գտնվում է լուծարման գործընթացում, Ընկերության համար գուտ շահույթի բաշխման այլ ուղղություններ չսահմանել:
4. Ընդունել ի գիտություն, որ 2018 թվականի գործունեության արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի գումարը Ընկերությունը 2019 թվականի հունիսի 20-ին վճարել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել էնկերության գործադիր տնօրենին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 Հունիս, 2019 թվականի
ք. Երևան